

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ  
ՅՈՒԿՈՐ Յ. ՇԵՔԷՐԵԱՆ

ՊԵՏԱՍԻԱՆԵՏՈՒ  
ՕՇԻՆ ԼՍԱՅԵԱՆ  
(ՓԵՏԱՐԵՆ)

10 ՓԱՐԱ

# ԽՊԱՆԻՐՆԻ

اداره خا  
ازمیرده چاقور خا  
نومرو ۵۴

ԽՊԱՆԻՐՆԻ  
240-ր խան, Թիւ 54  
ԻՉՄԻՐ

10 ՓԱՐԱ

ՊԱՏԿԵՐԱԶՍՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ՄԱՄԼՈՅ ԴԱՏԸ

Երկուշաբթի օր տեղի ունեցաւ դատավարութիւնը այն դատին՝ զոր մեր կուսակալը բացած էր տեղական քանի մը թերթերուն դէմ, իբր գրապարտիչ եւ գինք ու իշխանութիւնը խճճեցու աշխատող:

Շատ տարօրինակ դատ մըն էր սա, եւ մանաւանդ շատ հետադրգրական քանի որ հասարակութեան մեծամասնութիւնը թերթերուն կուսակից էր շատ մը կետերու մէջ:

Արդէն դատը այնքան մեծ ազմուկ հանած էր որ Մէնեմէնէն շատեր մտադիր են եղեր իզմիլ գալ այդ օրը եւ ներկայ գտնուիլ, սակայն ստիպուել էին չգործադրել իրենց որոշումը՝ նկատի առնելով իզմիլի դատարանին փոքրութիւնը, տեղւոյն անակութիւնը: Եւ իրօք ասեղ նետելիք տեղ չիկար Երկուշաբթի օր:

Դադարիս շատ մը ծանօթ եւ յաջող փաստաբանները առաջուան իսկ պատրաստակամութիւն յայտնած էին անձնուիրաբար յանձն առնել պաշտպանութիւնը թերթերուն:

Նախ խօսեցաւ Ահէնկի արտօնատէր եւ խմբագրապետ Ալի Նազմի Պէյ, որ առանց փաստաբանի մը օգնութեան բացատրեց թէ ինք իր թերթին մէջ հրատարակած էր հանրազրուութիւն մը Մէնեմէնէն՝ զոր ի մէջ այլոց, ստորագրած էին նաեւ տեղւոյն Միւսթիֆի եւ Քալապեանութիւնը:

Աղերսագիրը իշխանութեան տկար գործելակերպին վրայ է, ըսաւ. Նազմի Պէյ եւ ոչ թէ մեր կուսակալին դէմ, եւ եթէ մեր գրաւածներուն մէջ անձնական ոեւէ յարակուս՝ եր տեսնէ կուսակալ Պէյը, թող հաճի գալ մեր քովի մատարաններէն մին բազմիլ, եւ ներկայանալ արդարութեան:

Յետոյ, այսպէսով այդ իրաւասութիւնը չնշեցով իսթիմաթ պահանջեց:

Կարդը Քէօյլիւ ի եկած էր, որուն կողմէն նախ գեղեցիկ պաշտպան ողական մը խօսեցաւ Աս. Գ. Պուպի որուն յաջորդեցին ուրիշ ծանօթ փաստաբաններ ամբողջն ալ Պարթօ ին կողմէ: Ու են վերջը խօսեցաւ Իթիհատ ի արտօնատէր եւ ծանօթ իրաւագետ Պէքիր Պէհլույ Պէյ որ նախ հարցուց թէ դատարանը մամչոյ ո՞ր օրէնքով պիտի գործէր, հիմնով թէ նորով:

Իրեն ըսին թէ այդ բողոքները հրատարակուած էին նոր օրէնքին հրատարակութենէն անմիջապէս ետք:

Բայց, Պէքիրի Պէհլույ Պէյ դիտել տուաւ թէ նոր օրէնքը, հրատարակութենէն տասնը հինգ օր վերջ Պոշոյ մէջ եւ 2 ամիս վերջ գաւառներու մէջ միայն պիտի սկսէր գործադրուիլ:

Նախագահը այս կէտը հարցուց Ընդհանուր դատախազին՝ որ ըսաւ. թէ օրէնքը կը գործադրուի հրատարակուած վայրկեանէն իսկ: Ասոր վրայ մեծ վիճաբանութիւն մըն է սկսաւ. որուն վրայ դատարանը՝ խորհրդակցութենէ մը ետք, որոշեց յաջորդ Հինգշաբթուան յետաձգել դատավարութիւնը, քանիչու համար նախ թէ մամչոյ օրէնքը երբե՞ն սկսած է գործադրուիլ. երկրորդ, թէ թերթերուն բողոքները որ աստիճանի իրաւացի էին:


Նայինք այս տարօրինակ դէպքը ինչպէս պիտի վերջանայ:

ՕՍԴԱՆԾԻ





## ՆՈՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ



Պոչսական վերջին թերթերէն կը տեղեկանանք թէ Օսմ. խորհրդարանի վերջին նիստին մէջ Մանսթըրի երեսփոխան Թրաւեան Նաչի էֆէնդէն մէջտեղ նետեր է թուրքիոյ մէջ հրատարակուող չրագիրներու տրուելիք բարեկարգութիւններուն խնդիրը:

Ու իբրեք ինչ բան աւելի օգտակար կրնայ ըլլալ մեզի, եթէ ոչ մտաւորական զարգացումը որուն աւանդէն մեծ ազդակն է մամուլը:

Արդէն շատ անգամներ աչ ասկէ առաջ խնդիր եղած էր դիւրացնել միջոցները թուրքիոյ մէջ մամուլի տարածումին: Նախ խնդիր եղած էր ջնջել բոյորովին եւ կամ զեղջեյ փոխադրութեան ծախքը, իսկ հիմա կը տեղեկանանք թէ Թրաւեան Նաչի էֆէնդէն կ'առաջարկէ չրագիրներու յատկացուելիք թուրքերէն մաքս չառնել, եթէ ոչ ձրի գէթ շատ ածան գինով մը գաւառները փոխադրել:

Լրագրութեան այս բարեկարգութիւն աչ անշուշտ պիտի յաջորդէ ուրիշ կարեւոր խնդիր մըն աչ որ գրեթէ անբաժան է անկէ, այսինքն հեռագիրներու սակագոյցներուն զեղջումը:

Աւելի ածան գնով մը հեռագրելուն օգուտները հոս միտումի համբելով ժամաձանսու ըլլալու պետք չունինք կը բարէ միայն երեսակայեյ գաւառներու ունենալիք օգուտները երբ օրը օրին մանրա Բանսթրէն հետեւին կեդրոններու կացութիւններուն:

Թերթերը յետոյ կ'աւելցնեն թէ այս առաջարկութիւնը դրկուած է եղեր եյմտակաւ յանձն առնուլիք որ չիայոյս ենք թէ ըմբռնելով խնդրին մեծ կարեւորութիւնը պիտի չարժի ի նպատակ Բրոնզ հայրենիքին:

Խեղճ մամուլը ոյսքան տարիներ գրաքննութեան

նիքաններուն տակ կաշկանդուել է ետք երբ բարերար Սահմանադրութեան շնորհիւ սկսած է քիչ մը ազատ շունջ առնել, դէպի վեր թռիչներ առնել, իրօք պետք ունի քիչ մը ոյժի, քիչ մը օգնութեան՝ որ կերպով որ ըլլայ սն: Եւ Թրաւեան Նաչի էֆէնդէն առաջարկը խորհինք որ էն գործնական էն պետքական աշղակն է որ կրնայ տրուիլ մեր Մամուլին զայն մղելու համար դէպի բարեկարգութիւն, դէպի կառարեւազորութիւն:


Այդ օգնութիւնը աչ աւելի աշղեղիկ պիտի ըլլայ եթէ հիմա տրուի Մամուլին երբ սն Մամուլոյ նոր օրէնքին միջոյաւ որոշ ձեւի մը որոշ ուղղութեան մը կը հետեւի:

Եւրոպական ժողովրդական գրականութեան եւ չրագրութեան տուած օգուտներուն զաւոյնիքը միթէ այս կարեւոր կետերուն մէջ չէ որ պետք է մենք աչ գտնենք: Տուէ՛ք ժողովուրդի մը ածան ուսում, ածան ծանօթութիւն եւ ածան գիտութիւն եւ անկէ վերջ միայն պահանջեցէք անկէ որ կարենայ ձեզի տալ իրմէս պատուած չաւագոյն բանը՝ յառաջդիմութիւն:

Զի գործածուած դրամագոյնիս մը տոկոս սպասելու պիտի ն Բանէր երբ մենք աչ գաւառի որեւէ մէկ խոր անկիւնը մութին մէջ մեծցած գիւղացիէ մը սպասէինք իր քաղաքացիի պարտականութեան անախալ գործադրութիւնը, երբ այդ խեղճը չգիտեր իր ընելիքը, իր որոշ պարտականութիւնները եւ իրաւունքները:

Ոյժ տանք մեր մամուլին եւ ուղղակի ոյժ տուած պիտի ըլլանք հայրենիքին յառաջդիմութեան:

ՅԱԿՈՐ ԱԽԵՏԻՍԵԱՆ





## ԶՈՒԱՐԹ ԽՕՍՔԵՐ

### ԲԱՐԵԿԱՄԱՆ ՍԽԱԼԸ

Շիք, ֆիֆթի թու. բարեկամ մը ունիմ ես, ձեզմէ աղէկ չըլլայ, որ միայն դէմս կեղծէ այն օրերը, երբ Ստեփանն էֆ. Սպարթալը իր օրհնած բերանը անշամ մը կը բանայ խորհրդարանին մէջ: առջի օր տեսայ այս հազուագիւտ մ'օն ամիս, որ ձեռքս թօթուէէն, եւ Զարիֆեանի գալստեան, ծանօթ տիկինի մը եւ անձամբ օրիորդի մը վրայ խօսեցէն՝ ետք յանկարծ խօսքը փոխելով.

— Մօն չէր, ըսաւ, մերաքիս գնաց, մէջ մը չի կրցի աեսնել Պարթեւին կնիկը:

— Որ Պարթեւին սա մեր էքս-յեղափոխականին:

— Հասկա ուրիշ որունը:

— Միթէ Սուրէն Պարթեւեանը ամուսնացեր է:

— Աղ աչ խօսք է: Կերեւի թէ կինն աչ կարող դերձակուծի մըն է: Գէշ չէ աս գործը:

— Աստուած պէշաղ չիտայ հեմէն, ծօ ես աչ կարծեցի թէ իրօք բան մը պիտի ըսես: Աղբար ան Տիկին Պարթեւեանը ուրիշ է:

— Ես ինչ գիտնամ, «Դաշինք» ին մէջ ծանուցում մը տեսայ, անպատճառ ըսի, մեր Պարթեւը ետուլք քէլքիւր մը ձեռք անցուցեր է:

— Զգէ դուն աչ. այս երկու Պարթեւեաններու մէջ այսքան տարբերութիւն կայ, որքան որ կայ

### «ԻԶՄԻՐԼԻ» ԵՎ ԾԱԽՈՒԻ

Ս. Թորքաճեանի գրաստանը առաջնորդարանի դիմաց:  
Բէշթիմաչնչար պաշի, ֆեսսի Անուշ Օհանեանի քով:

Գարաթաշ Լուծիկի սրճարանը:

օրինակի համար «Դաշինք» ին եւ . . . զօսթիւմ թայեօն, ին մէջ տեղ:

Բարեկամս խնդրէմ մեկնեցաւ:

∴

Մէջ մը որ բարեկամներու վրայ սկսանք խօսիլ, միտքս կուգայ ուրիշ մէկ բարեկամս, որուն հանդիպեցայ Հինգշաբթի օր՝ Ֆեմինաի չմշկարանին մէջ: Բարեկամս որ թատերական մասնաւոր քննադատն է Իզմիրի հայերէն մեծ օրաթերթերէն մէկ քանին (Եօհեօ', Եօհեօ'), հարցուց ինձի.

— Ինչպէս գտար երէկ գիշերուան Համլէթը:

— Գէշ չէր, յաջող անցաւ:

— Փափագեանք ինչպէ՞ս էր:

— Ուշադրութիւն չըրի:

— Հասկա Օֆելիան:


— Շատ չի գբաղեցայ անով:

— Է՛հ աղբար, ասոր չի նայեցար, անոր չի նայեցար, հապա ինչ ըրիր ամբողջ ներկայացումին պահուն:

— Ի՛նչ պիտի ընեմ, քովիկս նստող եւ թատրոնին սկիզբէն մինչեւ վերջը չեպչեպի ուսող սիրունիկ օրիորդը դիտեցի . . . :

— Ուրեմն երանի քեզի:

ՃԷՆԹԼՄԷՆ



### ԳԻՏԱԿԱՆ

## ՕԴԱՆԱԻԸ

Դեռ, ինչե՛ր, ինչեր պիտի հնարէ մարդկային հանձարը: Օղը նուաճել, ահա պատմութեան ամենափայլուն էջերէն մին: Մարդ կարող է իր երեւակայութեան մէջ սեղմեցնել ցամաքին կամ ծովին վրայ չըլլի՛չ, բայց օդ՞ը բարձրանա՛լ! Թռչուններու պէս սաւառնի՛չ, անհետանա՛լ, օ՛հ աչ անըմբռնելի՛ն,

1906 Օգոստոսի առաւօտ մը խումբ մը չըլկներ յանկարծ զարմանալի գործիքի մը առջեւ կը գտնեն ինքզինքերնին, զոր Պ. Սամթու — Տիւմեն մարգագետնի մը մէջէն կը քանէր. 3 հատ թռչնի հովա-

հարձերու նման բաց՝ որոնց թեթեւ փայտէ շնուած կմախքին վրայ ճերմակ կտաւ մ'է բռնուած մէջտեղը շարժիչ գործիք մը՝ նեղ նաւակ մը, գշանաձեւ սլաք-տուտակ մը եւ Յ պիսիք չէթի ամիրներ:

Ուշադրութիւն, շարժիչ գործիքը կ'երեւայ, սլաք-տուտակը կը դառնայ ու օդանաւը, կանանչին վրայ կը գտորի, յանկարծ գործիքին յառաջակողմը կը բարձրանայ, վեր կեցայ ու քիչ ատենէն ամբողջ մարմինը կը թեւատարածուի օդին մէջ, կը թռի, մինչ վարը վարը, ամբիւին նէջ անպատում հրճուանք մը նայեցանեմ ու փախուի օրիորդներուն սրտերը կը լեզւեր ու սուր ձիւեր կը բարձրանան օդին մէջ. . . Որքան պիտի տեսնայ թռչիք, փոյթ չէ, սա յաղթանակն էր, առանց օդաւարիկի մը զգնութեան մարդ մը կրցած էր թռիչ «օդէն աւելի ծանր հիւթովմէր ու դարերէ իվեր մարդկային ուղեղին մէջ ծնած ու մեծցած երազը այսօր կիրականար շնորհիւ Պէտրոսի, Ֆառմանի, Տիւլամակի ինչի:

Պէտրոս օդը բարձրանալէն չափաթ մը վերջ իր հնարքին մասին սա պէս կը խօսէր. մեղմ ու համակրայից չէտերով. « 1901 ին երբ ինքնաշարժ կառքերու շարքերն էր չինէի, սուիթը ունեցայ ցուցահանդէս մը այցելելու ուր առաջին անգամ՝ ըլլալով տեսայ Օտէնի կողմէ հնարուած թռչնաձեւ օդանաւի մը յանդուքն ու գիտնական մեքենականութիւնը ու այն վայրկեանին զարմանքս ու հիացումս փափաքի փոխուեցաւ ու սկսայ փորձերու: Շատ գործիքներ չնեցի, բայց միշտ անյաջող. — Բարկութեան զանոնք կը ճախջախէի, ու կրկին կը չինէի, կը կտրէի եւ առանց քաշութիւնս կորսնցնելու քաշութիւնն որ յաջողութեան միակ ու անհրժեշտ պայման է »:

Եւ ո՞նք անցեալները Պէտրոս իր կատարելագործած օդանաւով 24 ժամուան մէջ 189 քիլոմէթր եւ 950 մէթր. կը թռի օդի մէջ:


Հովը իւր բարեկամը եւ իւր թշնամին է, իր վայրաք մէկ մոլուցքն անդունդին վար կը գործէ գայն: Մշուշի տարտամութիւնը անզգայ կրնէ նաւորդը որ չզգար թէ 5 մէթր թէ 500 մէթր տեղ թռած է, աչքերու կուրութիւն կուտայ ու անգամ մը որ հաւասարակշռութիւնը կորսնցուց, վար կիչնայ ծովին խորը թէ չեռներու գագաթը. . . Պէտրոսին հարցնենք:

1908 Նոյեմ. 4 ին Պէտրոս հազիւ հողէն 8—10 մէթր բարձրացած՝ յանկարծ գետին կիչնայ, բարեբաղդաբ ու, դէմքի ջնջին մէկ սպրդումով կացասի, ուրիշ-

նե՛ր, աւելի բարձրերէն ինկած ու ոմանք վիրատուր եւ մէկ քանիներ նոյնիսկ մեռած են:

Ու այս հոպքերը մեզ կը յիշեցնեն թէ դեռ օդային նուանումը չէ կատարելագործուած, բայց անգամ որ կատարելագործուի բունակներուն պատուհասը պիտի չլայ պատերազմ յեղափոխութիւն եւ յարձակում օդէն պիտի սկսի:

ԱՐՄԷՆ ԺԻՐՕՅԼԷ



## ՀԱՅՈՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԷՆ ԳՈՂՑՈՒԱԾ

ԳՈՅԻՐՈՒ ԽՂԴԻՐԸ

15 Օրէ իվեր ըստ կը շրջէր թէ Իգմիլի Հայոց Առաջնորդարանի բարապան Լիւնը անյայտացած է իր հետ տանելով նաեւ կարգ մը զրգեր եւ իրեր, որոնք Առաջնորդարանէ մէջ դրուած էին եկեղեցին կողմէ:

Այս մասին Դաշինք երկտող մը գրած ըլլալուն՝ տնտեսական խորհուրդի անդամներէն Պ. Հայկ Շահինեան իւր կողմէ չուսարանութեան բան մը գրած էր նոյն թերթին մէջ, ինչ որ մեզի գոհացում չի տար:


Մենք կը պահանջենք եւ կ'սպասենք որ Ազգ. Բարապան Ժողովը ինք պաշտօնապէս հրատարակութեան տայ գոգցուած գորքերու եւ սպրանքներու իսկական քանակն ու արժէքը, ինչպէս նաեւ գողնւելուքն ձեռք բերելու համար իր գործադրած միջոցները որպէսզի կարելի ըլլայ ճշդեղ պատասխանատուները ու ժողովրդին մէջ այս առթիւ ելած յուզումը հանդարտեցնել:

Առայժմ մեզի վերապահելով մեր ըսելիքները սա չափը ըսենք որ, մեր ստացած տեղեկութեան համաձայն բարապան Լեւոնը ժամանակի ընթացքին կամաց կամաց արդ գոյքերը առաջնորդարանին փոխադրած է, ու վերջին անգամ նոյեմբեր 7- ին խոխակաւ չոգեմարով Պոլիս մեկնած է:



## Ա Ջ Ք Ե Ր Դ

(ՍԻՐԵՐԴ)



«Ի Զ Մ Ի Բ Լ Ի» Ի ԹԵՐԹՈՂԸ (7)

## ԿԱՐՄԻՐ ՍՊԱՍԱԽՈՐՆԵՐԸ

Է Ջ Մ Ը

ՌՈՒՍ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ

Հեղինակ. ԲԻԷՌ ԶԱԳՕՆ

Թարգ. Մ. Թ.

Գ.

ՉԵՐԲԱԿԱՆՈՒՄ

Յով-աչքերունդ հրմայրին մեյանոյց  
Դարաւոր գերին եղայ անդարձ,  
Ու նուաղումներունդ աչ կանացի  
Ուխտաւորք ջերմեռանդ:

Անուշուրիւնն այդ աչքերունդ  
Դիւթանք մ'ունի յումունն,  
Երազներու մէջ փայփայաւած ամպի պէս  
Որ յունոյն ժպիտներք կը գողնայ:

Այդ զոյգ մ'անմեռ տանարներունդ  
Որ սէրերու ցոհի սեղանք կայ,  
Սպասաւորն եղայ կամաւոր,  
Ու Սիրոյ կեանքին նորընծայ:

Ծով - աչքերունդ հմայքք մեյանոյց  
Պարէկն եղաւ սիրոյ կեանքիս,  
Ու անվիշտ կեանքի մը պատրանքով  
Դառնուրիւնով չեցաւ հոգիս:

Էս սակայն չը գոչացի  
Այդ զոյգ երկինքներք ճանչնայուն  
Զի անոնցմով ես ուսայ  
Մեծ Գաղտնիքք աղօթելուն:

ՎՈՐԱԺՆՈՒՆԻ

**ՅՈՒՇԱՏԵՏՐ.** — Շաբթուս մէջ քաղաքս ժամանեց  
ճանժի դերասանապետ Յ. Զարիֆեան իր խումբովը:  
Պ. Զարիֆեան Պոլսոյ մէջ այնքան գնահատուել է  
թերթերէն այնքան իրաւացիօրէն գնահատուել է վերջ  
Հայ Դերասաններու Ընկերակցութիւնով — որուն  
մէջ կարողներ չեն պակսիր — այս անգամ կուգայ  
Իզմիրցիներուն աչ վայելեցնելու, ճշմարիտ բեմական  
յաջողութիւններ:

Աւելի երկարօրէն խօսելու եւ գովելու պետքը  
չենք զգար հոս, քանի որ Իզմիրցի թատերասէր հա-  
ւարակութիւնը ինք պիտի հաստատէ Պ. Զարիֆ-  
եանի բացառիկ կարողութիւնը:

Ներկայացումները օրը օրին պիտի յայտարարենք:

ՐԻՐՈՐԹԸՐ

— Կը կարծես վրա՞ս բռնանայ քու որոշումովդ  
պոռաց Ալէքսանտրա նախամեծար կը սեպես բան-  
ասարկուիչ եւ դիապարտուիչ. բայց իմ գործիս չի-  
զար քեզի հետեւիչ:

— Բայց անկարելի է դիմադրել ուտիկաններուն,  
տղայ եւ դեռ: Տասը հատ պիտի մեռցնես. հարկւր  
հատ պիտի գան վրադ:

— Դիմադրութիւնը թերեւս օրինակ մը կը չլայ:  
Եթէ կուրինք Սմոյէնքի ունիւցվերները թերեւս ո-  
րտաւել ընդհանուր յեղափոխութեան մը կը կեր-  
պարանափոխուի:

— Ոչ', ըսաւ. Տիմիթի ամեն մարդ կը վախնայ:

— Ա՛հ, Թշուառականները: Մարդեր. . . մարդեր  
որոնք պատերազմներէ զատ ուրիշ բաներու վրայ  
չեն խօսիր. թէեւ իրականին մէջ կը վախնան վը-  
տանքէ իրենց մորթը:

Էս այս մարդերուն է որ ես ցոհեցի իմ հարստու-  
թիւնս եւ սպագաս, որ կրնար երջանիկ եւ պատուա-  
բեր ըլլայ:

Կսկսիմ տեսնել թէ խափուած եմ, բայց իրօք երբ  
չեփերք այսքան կը պահուցտին, զարմանալի չէ որ  
զինուորները կը վախնան:

— Մենք զինուորներ չենք, սիրելիս:

— Երբէք մարտիկներ աչ չպիտի ըլլաք:

— Ժողովուրդը չէք ճանչնար, անգամ մը որ ան  
կը շարժի, աչ կ'երթայ, ոչինչ կրնայ կեցնել: Բայց  
իրեն խթան եւ ոյժ պէտք է: Էս ես շատեր գիտեմ  
իր պատմէներու ետեւ հերոսներ կն:

— Գայլերու պէս էք, միայն խմբովին կը յարձակիք: Ռեվոլյուցիոյ ինձի տալ չե՞ս ուշեր:

— Ո՛չ, մի պնդեր, եւ եթէ այս թշուառական ոստիկաններէն երկու երեք հասն ալ սպաննելու իսկ ըզլաւ. յառաջացած պիտի ըզլա՞նք: Ամբոխը մեզ պիտի սուշէ:

— Բու վրադ եւ ուրիշ գաղափար մը ունի՞ր Տիմիթրի:

— Որչ՞

— Քեզ աւելի վճռական, աւելի սրտոտ կը կարծէի: Գիտե՞ս. եթէ տեղդ ըզլայի ի՞նչ կընէի:

— Խօս՛է:

— Եթէ այդ ռեվոլյուցիոյ ունենայի, ինքզինքիս կըսէի. «Ազատ եմ, ազատ պիտի մնամ: Բաղդիս տէրը եւ պիտի ըզլամ, բանտ երթալու տեղ, այն պահուն երբ ոստիկանները տանս դուռը զարնէին կապանիւնէ հոմանորհիս եւ ինքզինքս ալ՝ անոր ետեւէն:

Ահաւասիկ ինչ որ պիտի քնէի Տիմիթրի՛,»:

Օսթրով. դեղնեցաւ այս վճռական առաջարկին առջեւ: Գլուխը ծռեց, պատասխանելիքը չը գիտնալով:

— Թերեւս անպարտ կ'արձակուիս:

— Անպարտ արձակուիլ. . . պոռագ Ալէքսանտրա, ներուիլ դատարանէն՝ Թերեւս. բայց ընտանիքէս եւ հասարակութենէն. . . :

— Պա՛հ, ամէն ինչ կը մոռցուի:

Յետոյ անարգանքով:

— Քեզի համար Թերեւս չաւ է:

Օսթրով այն ատեն վերցուց գլուխը, աչքերը բարկանայդ.

Ա՛հ ազնուապետութիւն ալ կը ծախես. . . բընականը միշտ կը յայտնուի:

Քանի մը արցունքներ աղամանդսցան Ալէքսանտրայի բիրբերուն վրայ, կամչնար այս մարդէն:

Վաս մըն եւ, ըսաւ:

Ու վերստին պիտի խօսեր երբ ժողովուրդի ազադակ մը փողոցէն գրաւեց իր ուշադրութիւնը:

Տիմիթրի մարեց ճրագը եւ կամացուկ մը բացաւ պատուհանը:

Անոնք են, ըսաւ, խեղդուկ ծայնով մը:

Ալէքսանտրա անխօս՝ ոչ իսկ շարժեցաւ:

Քիչ վերջը դռան զարկին:

— Բացէք Զարին անունով:

— Տիմիթրի կը տատամսեր եւ կը դողդղար մարդոջ մարմինովը:

— Ալէքսանտրա, փափագ, չամպը վաւե՞նք

Ու ան խոտակցաբար ինքն իր վրայ կը դառնար:

— Բացէ՛ք դուռը, ըսաւ ոստիկան մը:

Դարբին մը սկսաւ խոռնել նիքերը:

Այն ատեն Տիմիթրի Օսթրով ոյժ ունեցաւ բանալու:

Յանկարծ սենեակը շուսաւորուեցաւ եւ ոստիկանները խուռեցին երկու երիտասարդներուն վրայ:

Անոնցմէ մին ձեռքը դնելով երիտասարդին ուսին վրայ:

— Տիմիթրի Օսթրով. . . դո՞ւք էք:

— Ես եմ պատասխանեց այս վերջինը:

— Եւ այս կինը՞. . . աւելցուց ուրիշ մը ու մօտեցաւ. Ալէքսանտրային որ նստած էր:

Յանկարծ ճիշ մը համեց:

Ալէքսանտրա բաշկաթուռի մը մէջ նստած էր, իր գեղեցիկ դէմքը մահառեսիլ մէկ ուսին վրայ կախուած էր, արիւնի վտակ մը կը հոսեր իր կուրծքէն. . . :

Ոտքերուն տակ դաշոյն մը կար:

Աւջիկը ինքզինքը զարկած էր. Թեւեւ կը չնչեր տակաւին:

— Ի՞նչ է անունը այս կնոջ, հարցուց Տիմիթրիին ոստիկանապետը:

— Ալէքսանտրա:

— Մականու՞նք:

— Ուրիշ անունով չեմ ճանցած:

— Յետոյ կը սորվինք:

Ալէքսանտրան հիւանդանոց փոխադրեցին. բայց խեղճը մեռաւ ուամբան:

Արիւնը չուացած էր իր ամօթը. . . . . :

1877 ի Մարտ ամսուան մէջ Ս. Բեթերսպուրկի վճռաբեկ ատեանը հարցաքննելով ձերբակալուածները. ամենախիստ պատիժներով դատապարտած էր զանոնք:

Ոմանք Սիպերիա արքայութեան եւ ուրիշներ զըման Բերդարգելութեան եւ սաժանակիր աշխատանքի:

ՎԵՐՋ

ՄՐՑՈՒՄ. — Այս կիրակի կէս օրէն վերջ ժամը 2 1/2 ին իզմիրի Վասպուրական ակումբը քարաթաշի ակումբին հետ կարմիր շեռան ստորոտը ունագնդակի մրցում մը պիտի ունենան:

ԵՐՈՒՍԱՂԷՍ  
ԷՐՄԷՆԻ ՍԱՆԱՍԹԸՐԸ ԱՅՎԱԼԸ

Երուսաղէմ Էպիսկոպոս Բաթրիքի  
գալիմազամը Դանիէլ Էֆէնտի, Ե-  
րուսաղեմտէն աւարդը պէշ գլխաթի-  
ւէկրաֆնամէյի էվիւքի կիւն Բաթրիք  
Դուրեանն էֆէնտիյէ իրայէ իթմիշ վէ  
հէվմ մէվքիւրտէ րէֆազաթընտա  
Տէրսաստէթտէքի վէքիւը րահպ Սմ-  
րատ էֆէնտի իւէ Բաթրիքխանէ գա-  
րու քէթիխիւտասը Գամիր էֆէնտի  
օլտուքլարը հալտէ Ատլիյէ Նազարէ-  
թինէ պիւ աղիմէ ոլու թէկրաֆնա-  
միւլէրի մէզհէպ միւտիրի Պէհա Պէյէ  
իրայէ էլիմիշտիր

Պու թէլիկրաֆրումելէրոնէն պիրինտէ  
մուամալէյհին երուսաղեմ վէքիլի օ-  
լան րահլպ Սիմոն էֆէնտինին մա-  
նասթըրտա հայաթընըն թէհլիքէաէ  
օլտուղը պիլտիրմիշ խտի Տիկէր պի-  
րինտէ երուսաղեմ միւթէսարըֆընըն  
մանասթըրտան թէպախտէրի լազըն  
կէլէն իւչ րահիպի նէգտինէ ճէլպ իլէ  
Ատլիյէ Նազարէթինտէն ախղ իթտի-  
կի թալիմաթ իւղերինէ Տէրասատէթէ  
կիթմիւլէրի լուզումընը պիլտիրտիկի  
վէ հալպուքի պունլարըն երկուշար-  
թի կիւնինէ գասար միւսատէ թալէպ  
իթաիքէրի իշար օնմըշ խտի, Տիկէր  
պիր թէլիկրաֆրա մանասթըրտա  
մուքիմ օն գասար րահիպ Բաթրիք  
գալիմոգումընըն պիր ան էֆիւ մ-  
մուրիէթինէ վիրուտընա միւլթաղըր  
պուլնուրըլարը, աքսի թազտիրտէ  
քնտուլէրինինտէ մանասթըրտան չէ-  
քիլէճէքէրի ճալըլտըրը Տէգրաինճի

Թէկրաֆնամէտէ սալիֆէլ գիքը  
իւչ րահիպին թապալիտի ւչիւն Ատ-  
լիյէ Նազարէթինտէն վերիւնն է-  
միլլերտէն տօլայը պէյանը թէչէք-  
քիւր իտիլմիշտիւր Պէհա պէյ պու-  
թէլեհրաֆյարը օգուտըպտան վէ մին-  
տէրիծաթընը Նազըր Պէյէ թէպլիլ ի-  
տէճէյինի վատ իթտիքտէն սօնրա  
պիր գաչ կիւնէ գատար մէրգուման իւչ  
րահիպինին մանասթըրտան չըգարըլ-  
տըքլարը պիլտիրիլմէտիյի թագտիր-  
տէ էվամիրին թէէքիտ օլունաճաղընը  
պէյան օլունամըշտըր:

— Էրմէնի Բաթրիքխանէսի ուսմու-  
րը — Երրուսաղիմ Բաթրիք քայլոյմա-  
գամլղընա թային գըլընան Դանիէլ  
էֆէնտինին մահաւը մէմուրիէթինէ  
ադիմէթ իթմհատէն շէհրը մէզքիւր  
էրմէնի մանասթըրընտա զուհուր  
իտին ույզունսղըլըքլուրըն սէպէպի  
օլուն իւշ րահիպին հէօքիւմէթ մարի-  
ֆէթիէ Տէրուստտէթէ իսաւը զը-  
մննտու Բաթրիքխանէտէն Ատլիյէ  
Նազարէթինէ միււսաճասաթ օլնմըշ  
տորո:

ԿԱԶԷԹԱԼԱՐՏԱՆ

— Մէքթէպ պահրիյէյէ գոյտ ոլու-  
նուհաք շահիրտունըն լուզումը թա-  
յինինի հագղընուա Պահրիյէ նազա-  
րէթինտէն Բաթրիքխանէյէ պիր թէզ-  
քէրէ եազրումըշուր:

— Իզմիտ միւթէսարը՛քը սապըքը  
մուսա Գեաղիմ պէյ Բաթրիք Դուր-  
եան էֆէնտիյի էվելքի կիւ նզիյարէթ-  
լէ Ատահա իղթ իշաշը ֆաիւ վէ միւսէ՛  
պիպէրինին մասէպքը ահվալինէ  
տուլիք պագր մալլամաթ վերմիշ տիրս

Զեվճ վէ վալիտէսինի գաթլ իթմիշ  
օլմաղլա մազնունէնթամթ մուհաքէ-  
մէյէ ալընուպ ախիրէն պերաաթ  
խուն մէշհուրէ մառամ Ըսթայնհէլին  
պունաան պէօլէ տէրաաաթտէ իս-  
թիյարի իպամթ իտէճէկինի « Ըսթն-  
պօլ» Ղազէթասր հաղըյօր

— Աստանա պուսէնէ հէր սէնէտէն  
զիստէ իզտիվաճլար վուպու պուլուու-  
ղը մահալինտէն Տէրսաւատէթ զաղէ-  
թալարինա իշար օլունույօր

Կեչէն հափթա Զէյթունտան  
տախիւիւէն հազարէթինէն Էքբիւէն պիւր  
թէլէկրափտա գըթլըք վէ պահալը-  
լըղըն պաշ Կէօսթէրտիյի վէ Էթրաֆ  
քէօյլիւքլէրէտէ սիւպյէթ իթմէքաէ  
օլտուղու պիւտիթիւմիշտիւր

Պոնտան մատտէ Կիւրիւն, Էկիւն,  
Տիւրիկ, վէ պունըարտ ճիվար պու-  
լունան գասսպալարտա էքմէյին  
օզգասը եիւզ բարահա սաթըլտըդը  
խասպէր վերիյի,օր:

—Ատանա հարի քղատէկեանքն սի-  
կուրիթա գումբանեալարը ալէհինտէ  
իգամէ էյլէտիքլէրի թազմինաթ տա-  
վասը շէհր Դեկտեմբերին 7. 14, 21  
վէ 27 ինճի կիւնլէրի Տէրասատէթ  
պիսինճի թիճարէթ մահքէմէսինաէ  
րիւլէթ իտիլէճէքտիր:

Պու տաւաւարըն մասրաֆը իշուն  
Բաթրիքխանէ՛ 500 լիւա թախախ  
իթմիշ իսէտէ Ատուիշէ նազարէթի մա-  
սարիֆը մուհաքէմէ թաւէպ իթմէտի-  
շինաւն մէպլաղ մէզքիւրը էբմէշի  
միւհթաճէյնէ տաղըտըլաճաք տըրլ

ՏՊԱՐԱՆ ՕՍՏԱՆԻԷ. — Յ. ՇԷՔԻՐԵԱՆ

— Սամանն իլէ սիվազ արասնտա  
հաւըլաճաք օլան տէմիր հօլընըն  
քիաղըտլարն էօնիւմիդաէքի վիւքէ-  
լա մէճլիսինտէ օգունաճաքտըլը:

— Ապո-իւլ-համիրին խասթա օլ-  
տուլը Սիլանիկտէն պիւտիւրիլյօր:

— Օտմանը հէօքիւմէթինին Կիրիտ  
իչուն վիւմիլ օլտուլը նօթաեա գար-  
չու պէօյիւք տէօվլէթլէրին ճէվապը  
հէնուզ Պապ ալիլէ վիւրիւմէմիշտիր:

Օտմանը հէօքիւմէթինին հապարը  
պաքի գալմաք շարթիլէ իշին շու  
ուրալարաու պիւթիրիւմէսի գապիլ օլ-  
մատըլը եօնտաքի պէօյիւք տէօվ-  
լէթլէրին ֆիքրինի օտմանը հէօքիւ-  
մէթինինտէ գապուլ խէճէկի գան ի-  
տիւմէքտէ տիր:

— Սըրպ գրալընըն հազընտա ս-  
թանաօլա կէլէճէկի սէօյլեմէքտէ  
տիր:

— Կիթտիքճէ ալմաքտա օլան Ար-  
նաուտլարը սուստըլմաք իւզրէ  
հէօքիւմէթ ճավիտ Փաշայը կէրիլէ  
չաղըրաճաքտըլը:

— Սիսամըլարըն շիքիայէթլէրի

իւզէրինէ պաղը թահքիքաթ եար-  
մաք իւզրէ հէօքիւմէթ Թ. Աղատօ-  
բուլօյը Սիսամա կէնտաբմիշտիր:

— Կիրիտ միւսլիմանլէրի, Կիրի-  
տին Եունանիսթանա վէրիւմէմէսի ի-  
չուն ալաք պատմալէրինի թէլլըրաֆ-  
լա Պապըմիլիլէ պիւտիւրիւմէրտիր:

— Ատլիլէ նազարէթի բաթրիք-  
խանէյէ պիր թէլլէրէ հազարաք  
պատէմա պէշիքթաշ էրմէնի գապ-  
րիսթանընա տէֆն խոթիւմէմիս լու-  
ղումը պիւտիւրիւմէրտիր:

Իւտէպայի միւսլիմանլէրէն պիր գա-  
թը միւսլիմէրէմ քէնտի թէլլիֆաթըն-  
տան պիր քիթապը նէշը խոտապ, օլ  
քիթապըն ֆիրուխտընտան հասըլ օ-  
լաճաք մէպաղը իզմիր էրմէնի Հաա-  
տախանէսինէ լութֆէն թէրք խոթ-  
էօր:

Պու քիթապ Հաստախանէնին րէս-  
մի մէօհրինի հալի օլուպ, մէրքէզը  
ֆիրուխտը Թօքաճիան քիւթպիա-  
նէսի օլաճաք տըլը:

Անճապ թապու նէշրի իչուն իւլ  
սամանը լիրասը լաղըմ օլտըլը հա-

սէպիլէ, խալըրը սէվէր պիր ազգա-  
սէրին հիմմէթիլէ էկէր պու իւլ  
լիրա թէտարիք օլուրա, իամի աախի  
ալէնէն պէկան վէ մահքիւք օլաճապ-  
տըլը:

Փարաճա օլան մուսվէնէթ իշուն  
Սաաշնորգալուն Դիւանապետի Պա-  
լապանեան էֆէնալէ միւրաճաաթ օ-  
լընուր:

ՔԱՏՐՈՆ ԿԷՅ

Պ Յ ԶԱՐԻՖԵԱՆԻ

Ա. ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ

Նոյնմ. 21 Շարաթ գիշեր ժամը 9 ին  
Մեծանուն Շիլլերի հռչակաւոր  
տրամբ Զմիւռնիլոյ մէջ առաջին  
անգամ ներկայանալի

ՆԵՆԳ ԵՒ ՍԷՐԸ

6 վարադայրով

Գիւն Տոմսակի

Ա կորգ 15, Բ 10 (Մեծ. 19 էն)

Տոմսակները կը ծախուին Պր. Սեդ-  
րաք Թօքաճիանի գրատունը ինչպէս  
նաեւ ամէն օր ղրեկայայտման էիշերը  
թաարոնին կիշէն:

« Ի Զ Մ Ի Ր Լ Ի » Ի ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ

Թերթիս ազդարարութեանց գործակալութեան միակ նպատակն է, միշտ օգտակար հանդիսանալ հա-  
սարակութեան:

Ճ դրուշով պիտի ապուին 3 տողէ ամեն տեսակ ազդեր

Նոյնպէս իր գաւառի բազմաթիւ բնակիչները ապու համար՝ պատրաստ է իրեն ուղ-  
ղուած ամեն տեսակ կարեւոր հարցմանց օրը օրինապատասխանել պայմանաւ որ գրուելք պատասխա-  
նին բօսդի ծախսը դրկուի իրեն ու կննդունի ամենտեսակ արտածման ու ներածման ապրանքային մուշ-  
ներ, եւ կիւսացնէ ինչպէս քաղաքիս նոյնպէս եւ Եւրոպայի մեծ քաղաքացի մէջ անոնց ծախուած գիները:

ՊԱՇՏՈՆ ՈՒՋՈՂՆԵՐ

Հայերէնի, Թրքերէնի եւ հաշուա-  
կալութեան համար երիտաւորք մը  
պաշտօն կը փնտռէ: Թիւ 1

Թրքերէնի, Գերմաներէնի եւ տո-  
մարակալութեան հմուտ ուսուցիչ մը  
մտանաւոր գասեր տալու պատրաստ  
է, զիւրամաշէլի գնով Թիւ 2

32 տարեկան ուժեղ ու գործունեայ  
մարդ մը գործ կը փնտռէ, իզմիրէ  
գուրա ալ կրնայ մեկնիլ: Թիւ 3

Սպիտակեղէններ լուացող կին մը,  
եւ խիստ համեղ կերակուրներ եփող  
թիւրի մը տուններու մէջ աշխատու-  
անան գործ կուզեն: Թիւ 4

Երիտասարդ մը, որ ծանօթ է գրէ-

թէ Անտուոյուի բոլոր քաղաքներուն,  
կ'ուզէ ո'ւնէ վաճառակիւնի մը հաշուոյն  
աշխատելու: Թիւ 5

Երիտասարդ մը որ մաքուր ալա-  
թուրգա եւ ալաֆրանկա կերակուր  
կեփէ, տան մը մէջ կամ ալլուր գործ  
կը փնտռէ: Թիւ 16:

ԶԱՆԱԶԱՆ

Խիստ աճան գնով կը ծախուին Զ-  
միւռնիլոյ մէջ տուն մը, քօքարեալլի  
կողմ 47 արտափար հող եւ մեծ վէ-  
զեր խանի մէջ երկու դրամենեակներ:  
Թիւ 10

Սինէմաթօկրաֆի գործակալութիւն  
մը արժէթուղթերու վրայ ընկերու-  
թիւն մը հիմնել կ'ուզէ: (Մտանակցիլ  
փափաքողք զիմել Թիւ 11

Զմիւռնիլոյ ամբողջ թաղերու մէջ  
զիւրամաշէլի գներով վարձու տու-  
ներ եւ սենեակներ կը գտնուին միւր  
որամադրութեան տակ: Թիւ 12

Հանքային մետաղներու խիստ հե-  
տաքքեր եմ: Թիւ 14:

Ամէն տեսակ մեքենաներու յանձ-  
նարարութիւններ կ'ստանձնեն: Թիւ 15:

Կը ծախուի տպագրական ձեռքի  
մամուլ մը աճան գինով: Թիւ 18

ՊԱՇՏՈՆԵԱՅ ՓՆՏՐՈՂՆԵՐ

Խիստ կարեւոր հատաստութեան մը  
ամէն կողմէ ներկայացուցիչներ կը  
փնտռուին: Թիւ 8

Քօմիսիօների մը համար (բլասիէ)  
կ'ուզուի: Թիւ 9

Փախագործ կրնան դիմել խմբագրութեան, կիսդէն մինչեւ ժամը 2